

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/3

4 հունիսի 2013թ.

Քննարկվեց <Այ Թի Լաբ> ՍՊԸ տնօրենի 24.05.2013 թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Արաբկիրի <Տ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 15.05.2013 թ-ի թիվ 220875 որոշման դեմ:

<Այ Թի Լաբ> ՍՊԸ տնօրենի գանգատում մասնավորապես նշված է.

Վարչական իրավախախտման ակտի հիմքում դրված է արձանագրությունը առ 13.05.2013 թ-ի (թիվը նշված չէ): Արձանագրության մեջ նշված է, որ. <Աշոտ Հարությունյանը «Օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ է հարկային տեսչություն ներկայացրել 2013 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի հաշվարկը, և այդ արարքը համապատասխանում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասին»:

2013 թ-ի փետրվարի 20-ին «Վարչապետի հանձնարարությամբ, հարկատուների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվելու: Սույն հանձնարարության մեջ նշված չէ հունվար ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկի հանձման նոր ժամկետ:

2013 թ-ի փետրվարի 28-ին «հարկային ծառայության պաշտոնական կայքէջում տեղադրված պաշտոնական նորություններ բաժնից տեղեկանում ենք, որ 2013 թ-ի հունվար ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկի հանձման ժամկետը երկարացվել է մինչև 2013 թ-ի մարտի 7-ը ներառյալ:

2013 թ-ի փետրվարի 28-ին «հարկային ծառայության պաշտոնական կայքէջում տեղադրված հաղորդակցությունը համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» «Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետին:

<Իրավական ակտերի մասին» «Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում նախատեսված ժամկետներում:

Նորմատիվ իրավական ակտերը կարող են ուժի մեջ մտնել ոչ շուտ, քան սույն օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե սույն օրենքով ուղղակի այլ բան նախատեսված չէ:

Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող և փոփոխող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաև դրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե այդ նորմատիվ իրավական ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ կամ եթե սույն օրենքով ուղղակի այլ բան նախատեսված չէ:

Նորմատիվ իրավական այն ակտը, որում ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: «Նտևաբար, 2013 թ-ի մարտի 7-ը, որպես հունվար ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկի հանձման վերջնաժամկետ, չի կարող հանդիսանալ:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված առավելագույն վարչական տուգանք:

Այսպիսով վարչական մարմնի կողմից անտեսվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 2-րդ կետի, 8-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերը շարադրվածից և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի դրույթներից <Այ Թի Լաբ> ՍՊԸ տնօրենը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 15.05.2013 թ-ի թիվ 220875 վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), <Այ Թի Լաբ> ՍՊԸ տնօրենի և Արաբկիրի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

<Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն. <Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել՝ ...

2) եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացողի) ֆիզիկական անձանց համար հաշվարկված (քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարված) եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի, իսկ կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված կուտակային վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ>:

Վերոգրյալից ըստ էության հետևում է, որ քննարկվող դեպքում <Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված եկամտային հարկի ամփոփ հաշվարկը չներկայացնելու համար խախտումն կատարված է եղել 2013 թ-ի փետրվարի 21-ին: Այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

<Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. <Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի>:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 220875 որոշմամբ վարչական տույժը նշանակվել է 15.05.2013 թ-ին, այսինքն՝ իրավախախտումը կատարվելու օրվանից ավելի քան երկու ամիս անց:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 15.05.2013 թ-ի թիվ 220875 որոշումը, իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ